Կ-013[1]-01.06.2017,03.11.2017-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «որն օրենքի ուժով չի կարող» բառերը փոխարինել «որը սեփականության իրավունքի ծագման պահին օրենքի ուժով չէր կարող» բառերով.

2) լրացնել նոր՝ 1.1 մասով.

«1.1 Եթե օրենքով թույլատրվող հիմքերով անձին որպես սեփականություն անցած գույքը դրա նկատմամբ սեփականության իրավունքը ծագելուց հետո առաջացած փաստական հանգամանքի ի հայտ գալու հիմքով օրենքի ուժով չի կարող նրան պատկանել սեփականատերն այդ գույքը պետք է օտարի այդ հանգամանքի ի հայտ գալուց հետո մեկ տարվա ընթացքում, եթե այլ ժամկետ նախատեսված չէ օրենքով»:

~~1-ին մասում «ծագման պահից» բառերը փոխարինել «դադարման հիմքի առաջացման պահից» բառերով:~~

~~2~~3) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Այն դեպքերում, երբ սեփականատերը սույն հոդվածի 1-ին կամ 1.1-ին կետում նշված ժամկետում գույքը չի օտարում, նման գույքը՝ դրա բնույթի եւ նշանակության հաշվառմամբ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի դիմումի հիման վրա կայացված դատարանի վճռով, վաճառվում է հարկադիր կարգով եւ ստացված գումարը հանձնվում է նախկին սեփականատիրոջը կամ վերածվում է պետական կամ համայնքային սեփականության, իսկ նախկին սեփականատիրոջը հատուցվում է գույքի արժեքը:»

Հոդված 2. *Անցումային դրույթներ*

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Այն գույքը, որոնց նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքի դադարման հիմքերը առաջացել են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, սեփականատերն այդ գույքը պետք է օտարի սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարի ընթացքում»: